Գիւղիս մէջ միմիայն մէկ աղբիւր կայ խմելու համար, առուներու ջրերն առատ են, ձմեռն ջրհորներից ջուր կը հանեն անասնոց համար, ամեն տան ջրհոր կայ, մի երկար փայտ ուղղահայեաց տանիքէն վեր բարձրացած՝ այլ հորիզոնական ձեւով գերանի մի միջավայրն ազուցուած է ցցուած գերանի ծայրին. որով ջուր կը հանեն ջրհորներէ։

Գիւղիս 10 վայրկեան արեւելեան հիւսիսն բազմաթիւ աղբերակունք կան, ուր էր նաեւ հին գիւղն՝ որոյ աւերակներն կերեւին, այս աւերակի մօտերն «Դիլոյի կոռ» անուամբ գերեզմանատուն մի կայ քիչ բարձր դարի մի վերայ. այս գերեզմաններն պեղելով գիւղացիք գտած են արոյրէ ջուր խմելու համար կլոր թաս, զոյգ մի արծաթեայ ապարանջան, ամանի մէջ այրուած ոսկոր, մեծ և փոքր բղիկներ, հողի մէջ գտնուած կմախքներու երկու քովերն հողէ փարչ, ոմանց արոյրէ թաս, ոմանց ևս $^1/_4$-$^1/_2$ օխայ մանր ուլինք։ Ապարանջանը զուտ արծաթ էր, երկու ծայրերն՝ իրար մերձեցած վայրը՝ վիշապի գլխու ձև է, թասին մի մատի հարուած տուի, նուրբ հնչում մի զոյացաւ և երկար տեւեց։

Գտնուած է նաեւ մէկ թիզ լայն միջկապ մի, օղակ օղակ իրար մէջ անցուցած, երկու ձի փորագրուած է վերան և կառքի լծուած, սաղաւարտեայ գլխարկով մին կառքը կը կառավարէ։ Այս կամարը կոտորած են իմանալու համար թէ արծաթ է. յետոյ տարած են ի Կարին և չեն կարողացած գիտնալ թէ ինչ հանք է։ Ցայս տեսած չեմ։

Գտած են նաեւ փտած սուր մի, նաեւ մի կմախք որ ծնկերն կտրուած՝ կողքին դրուած։ Գիւղացիք մի առ մի գերեզմանատունը կը փորեն գանձ գտնելու յուսով։